# ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՔԱՌԱՍՈՒՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ԱՌԹԻՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԱՆՁՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՀԵՌԱԳՐԵՐԸ

## ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱՅԻ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ ՇՄԱՎՈՆ ԱՌՈՒՇԱՆՅԱՆԻՆ

ԵՐԵՎԱՆ

Ուրախ սրտով շնորհավորում ենք Ձեզ Սովետական Հայաստանի 42-րդ տարեդարձի առթիվ և մաղթում, որ միշտ անսասան մնա ու միշտ աճի ու ծաղկի խաղաղության մեջ մեր վերածնված Մայր Հայրենիքը՝ սովետական ժողովուրդների եղբայրության դրոշի ներքո:

ՎԱԶԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ

## ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱՅԻ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ ԱՆՏՈՆ ՔՈՉԻՆՅԱՆԻՆ

ԵՐԵՎԱՆ

Հայաստանում սովետական կարգերի հաստատման 42-րդ տարեդարձի առթիվ ջերմապես շնորհավորում ենք Ձեզ և մաղթում, որ մեր վերածնված Մայր Հայրենիքը միշտ շեն մնա ու անսասան և նորանոր նվաճումներով փառավորվի սովետական ժողովուրդների մեծ ընտանիքում, ամբողջ աշխարհի խաղաղության պայմանների մեջ:

Հայրենի կառավարության և անձամբ Ձեզ մաղթում ենք լիակատար հաջողություններ Ձեր հայրենաշեն գործունեության ճանապարհին:

ՎԱԶԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ

## ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱՅԻ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ ՍԱՐԳԻՍ ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ

ԵՐԵՎԱՆ

Ջերմապես շնորհավորում ենք Ձեզ Սովետական Հայաստանի 42-րդ տարեդարձի առթիվ, մաղթելով, որ մեր շեն ու խաղաղ երկիրը հավետ մնա անսասան ու առաջադիմի օրեցօր, հերջանկության համայն հայ ժողովրդյան:

ՎԱԶԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՎԱԶԳԵՆ Ա-ԻՆ

ԷՋՄԻԱԾԻՆ

Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի Նախագահության և անձամբ իմ անունից շնորհակալություն եմ հայտնում Ձեզ Հայաստանում սովետական կարգերի հաստատման 42-րդ տարեդարձի առթիվ Ձեր շնորհավորական հեռագրի համար:

Շ. ԱՌՈՒՇԱՆՅԱՆ
Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի
Նախագահության Նախագահ

ԵՐԵՎԱՆ

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՎԱԶԳԵՆ Ա-ԻՆ

ԷՋՄԻԱԾԻՆ

Ընդունեցեք Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետի և անձամբ իմ շնորհակալությունը Հայաստանում սովետական կարգեր հաստատվելու առթիվ հղած Ձեր շնորհավորանքների և բարեմաղթությունների համար:

Ա. ՔՈՉԻՆՅԱՆ
Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետի Նախագահ

ԵՐԵՎԱՆ

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՎԱԶԳԵՆ Ա-ԻՆ

ԷՋՄԻԱԾԻՆ

Հաճեցեք ընդունել մեր շնորհակալությունը Հայաստանում Սովետական կարգեր հաստատվելու 42-րդ տարեդարձի առթիվ Ձեր ջերմ շնորհավորանքների և բարեմաղթությունների համար:

Ս. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր
Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ

ԵՐԵՎԱՆ